ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

21 հոկտեմբերի 2016 թվականի N 141-Ա

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 34-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Աբովյանի Վ. Համբարձումյանի անվան N 10 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի 2016 թվականի հոկտեմբերի 17-ի N 8 արձանագրությունը *(որոշումը)* **կարգադրում եմ.**

1. ***Մնահիպ Ռուբենի Ստեփանյանին*** 2016 թվականի հոկտեմբերի 21-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Աբովյանի Վ. Համբարձումյանի անվան N 10 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ *նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:*

2. ՈՒժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2016 թվականի օգոստոսի 22-ի <<*Լ. Սառաջյանին տնօրենի պաշտոնից ազատելու մասին*>> N 97-Ա կարգադրության 2-րդ կետը:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Աբովյանի Վ. Համբարձումյանի անվան N 10 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության հանձնման-ընդունման աշխատանքները և ներկայացնել համապատասխան արձանագրություն:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2016 թվականի հոկտեմբերի 21
ք. Հրազդան